# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

« 17 » « դեկտեմբերի » 2025թ. ՆՄՈ/ 2045 Ա

ք.Արմավիր

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի N ՄՈ/960-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի N16-Ն որոշման պահանջները* և Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 2060-Ն որոշման N 9.1 հավելվածը, նախադպրոցական հաստատությունների մանկավարժներին տարակարգի հավելավճարները վճարելու նպատակով՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. *Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի նոյեմբերի 11-ի «Գումար հատկացնելու մասին» N ՄՈ/960-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝*

1) *որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.*

*«1. 1. Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմին Հանրակրթության ծրագրի «Մասնագիտական զարգացման և վարձատրության փոխկապակցված համակարգի ներդրում՝ նախադպրոցական հաստատությունների*

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

մանկավարժների շնորհման գործընթացի միջոցով » միջոցառման շրջանակներում տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված 1 279 200 (մեկ միլիոն երկու հարյուր յոթանասունինը հազար երկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարից 610 300 (վեց հարյուր տաս հազար երեք հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ գումարը վերաբաշխել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր և Մեծամոր համայնքների ենթակայության թվով 2 (երկու) ՀՈԱԿ-ներին՝ համաձայն հավելվածի:».

2) որոշման 1-ին կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

3) որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստ՝ Ա.Հովհաննիսյանին հանրակրթական ծրագրերով նախկինում կնքված պայմանագրերում կատարել համապատասխան փոփոխություններ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179

**ՄԱՐԶՊԵՏ** **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

*Հավելված*
*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի*
*2025 թվականի դեկտեմբերի 17 -ի*
*ՆՄՊ/1045 –Ա որոշման*

*<<Հավելված*

*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի*

*2025 թվականի նոյեմբերի 11–ի*
*ՆՄՊ/960-Ա որոշման*

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻՆ ՏԱՐԱԿԱՐԳԻ ՇՆՈՐՀՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԻՋՈՑՈՎ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ «ԱՅԼ ՆՊԱՍՏՆԵՐ ԲՅՈՒՋԵԻՑ» ՀՈԴՎԱԾՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԳՈՒՄԱՐԻ ՎԵՐԱԲԱՇԽՄԱՆ

/հազար դրամ/

| Հ/Հ | Կազմակերպության անվանումը | Ընդամենը գումար |
|---|---|---|
| 1 | Մեծամոր համայնք | 173,5 |
| 2 | Արմավիր համայնք | 436,8 |
| | **Ընդամենը** | 610,3 |
| | | |

>>:

Восстановимая подпись

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ